ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

# ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննության առնելով ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ գործով դիմող կողմի միջնորդությունը՝ որպես դիմումի ապահովման միջոց մինչեւ գործի դատաքննության ավարտը վեճի առարկա նորմի գործողության կասեցման վերաբերյալ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի պահանջները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Մինչեւ սահմանադրական դատարանի կողմից 2009թ. մայիսի 8-ին նշանակված գործի դատաքննության ավարտը եւ սահմանադրական դատարանի կողմից գործով որոշման ընդունումը կասեցնել ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության գործողությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

3. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ սույն որոշման մասին անհապաղ իրազեկել հանրությանը՝ զանգվածային լրատվության միջոցներով, համապատասխան տեղեկատվություն հաղորդել հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 ապրիլի 2009 թվականի
ՍԴԱՈ -38